

Օգոստ 8, 1953

Արժանաշնորհ
Տ. Անդակ ՀՀՆՅ. Գաղտնաբեռն
Նախագահ ՀՀ Հայարքության
Ա. Յանձն. Սկզբից նկազեցոյ
Ցիրքոյթ

Արբեկի Տեր Առնակ,

Ստորև ենք Ձեզ նշում ՅՈ Բաւակիրք:

Ուրախ ենք որ Ցիրքոյթի մէջ կազմած է Առաջնորդարանի Օժանդակ Միության Սահմանադրության մը եւ թէ Հանձնեալ անձերը յանձն առած չէ ծառաց իրեւ Յանձնախումբի անդամները.-

Դր. Անդակ Դավիթյան
Դր. Մերուժան Մազլեան
Ընդհանուր Ապահովանքի Հանձնական
Ընդհանուր Ցէմերթեան
Ընդհանուր Համարիկեան
Դր. Պարուան Պարուան
Դր. Վահեն Բայցասեան
Դր. Զակար Ճանայեան
Ծիկ. Կարենիկ Արզարեան

Եղ Նշանակենք վերայիշեալ ներք իրեւ Յանձնախումբի անդամներ եւ վաստակ ենք որ անձն գրանցելով Առաջնորդարանի Օժանդակ Միության աշխատանքին կարեւոր իրեն պիտի լօւսին արգիւնաւոր գործաւնէութեան Սազթելով կարգութիւն եւ յաշազութիւն ։ Յանձնէ.

Մամեց Հայրական սիրոց ողջաւնիք
ազօթակից

ԱԽԱՋԱՐԴ ՀԱՅՈՅ ԱԽԵՐԻԿԱՅ

St. John's Armenian Church
REV. ARNAK KASPARIAN
3289 PASADENA
DETROIT 6, MICHIGAN

Յունիս 30, 1958

Գերաշնորհ
Տ. Տիրան Արքեպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եղբա:

ՀՅ

Գերաշնորհ Սրբազն Հայը,

Զեր հրահանգին համաձայն կազմեցինք Առաջնորդարանի Օժանդակ Միութեան Մասնաճիւղ մը Տիթրոյթք քաղաքին մէջ: Մասնաճիւղ կը բաղկանայ ինը անդամներէ, որոնք ժողովի մը մէջ ընտրեցին իրենց թղիւանը հետեւեալ կերպով.

Յակոբ Խաչիկեան	Ատենապետ
Մկրտիչ Սէլվեան	Փոխ-
Տիկ. Մարգարիտ Տաղլեան	"
Տիկ. Սաթենիկ Տէմիրճեան	Ատենադպիր
Տիկ. Վիքթորիա Զամանիկեան	Գանձապահ
Պարսամ Պարսամեան	
Խորէն Թովմասեան	
Յակոբ Ճանոյեան	
Տիկ. Վարսենիկ Աբգարեան	

Խոնարհաբար կը ներկայացնենք Զեր Սրբազնութեան այս անունները եւ կը խնդրենք որ զանոնք վաւերացնէք իբրեւ Առաջնորդարանի Օժանդակ Միութեան Տիթրոյթի Մասնաճիւղ: Կը վստահեցնենք Զեզ թէ անոնք իրենց կարելին պիտի ընեն Օժանդակելու Առաջնորդարանին:

Որդիական սիրով
աղօթակից
Առնայֆ Երից
Առնակ Երէց, Հովիւ

getroffen

Մարտ 24, 1954

Մեծայարդ
Տիար Հառւըզ Աթէշեան
Առենապետ Միական Խորհուրդի
Ա. Տովհ. Մկրտիչ Եկեղեցւոյն
Տիթրոյթ

Սիրելի Պր. Աթէշեան,

Ձեր Վարտ 17 թւակիրը՝ Ա. Զատկուտն առներուն
առթիւ երկու շաբթուան համար օգնական Հոգեւորական մը արա-
մագրելու ինդրանքին մասին՝ սահման ենք:


Ձեզ ծանօթ է որ թեմիս ծուխերուն Հոգեւոր մաս-
կարարութեան կարիքներուն հասնելու համար մեր Հոգեւորա-
կաններու թիւը զգալիօրէն անդաւարար է։ Զատկական առներուն
առթիւ անհոգիւ Եկեղեցիներ անհրաժեշտութիւն պէտք ունին Հոգե-
ւորականներու և ներկայիս զուտար է նոյնիսկ գոհացում առլ-
այգպիսիներուն։

Այս այսպէս լինելով՝ մեզ համար կարելի պիտի
շեւայ Ձեր ինդրանքին գոհացում առլ։

Հայրական սիրոյ ոքջունիւ
ազօթարար

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԱՐԻԿԱՅԸ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՏԻԹՐՈՑԹԻ Ա. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ
ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
Յիւրոյիք, Միավուն



BOARD OF TRUSTEES
of St. John's Armenian Church

1335 OAKMAN BOULEVARD
DETROIT 6, MICHIGAN

Մարտ 17 1954

Գերապատիւ

Տ. Տիգրան Ա. ՌԱՔՔ, Հներսոնան
Առաջնորդ՝ Հայոց Ամերիկացի

Նիւթորը


Արքազան Հայոց

Տիթրոյիթի Ա. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ հոգաբարձու
ժութիւնը իր Մարտ 16 ի ժողովին մէջ որոշեց ինզրել Զերդ սր-
բազնութենէն թէ եթէ Կարելիութիւն կայ, Օառկազարդի եւ Շառկի-
տօնին առթիւ համայնքիս Եկեղեցական գործերու շառութեան հե-
տեւանքով Աղերական մը որկուի Տիթրոյիթ գէթ երկու շարաթուայ-
համար Եկեղեցւոյ ընթացիկ գործերուն սպառելու ինքանէն նաև
օգնելու Առնակ երեցին որը շաս զբաղուած է Եկեղեցւոյ վերա-
բերեալ զանազան աշխատանքներով։

Յոյս ուսւնենալով որ նկատի կառնէր մեր ինդրանքը
եւ վաղը նղիոյթ կը պատասխանէր մեր նամակին որպէս զի ըստ
այն պատրաստենք մեր ուսնացուցի յայսարարութիւնը ուղղ շուշան-
անիրաժեշտ որ յանթենք սպագրութեան։

Ընդունեցէր մեր յարգալի զգացումներու հաւասարի ըր

Դ. Դիմաց Ա. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ հոգաբարձութեան



Առնապես
Տիթրոյիթ Հ. Պողոս Դամակ

St. John's Armenian Church

UP. 3412. ՄԱՐԴԻ ՀԱՅՈՒԹ ԿԱՆԱՔ

1335 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 6-9122

DETROIT 38, MICHIGAN

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
3289 PASADENA AVENUE
DETROIT 38, MICHIGAN
TOWNSEND 8-7563

PARISH COUNCIL

Rev. Arnak Kasparian, President
Haigaz Yagoobian, Chairman
Peter Manoogian, Hon. Chairman
Vahram Boyajian, Vice-Chairman
Mugerdich Shekerjian, Secretary
Martin Apkarian, Treasurer
George Cross
Richard Demirjian
Haig Jizmejian
Edward Korkolian
Harabed Mikaelian
Nerses Nersesian
Vahé Papelian

Յունվար 26, 1956

Գերաշնորհ

Տ. Սամբը Արք. Գալֆատան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Նորք, Ն. Ե.

Սիրելի Սրբազան Հայր,

Ծխական Խորհուրդին եւ մեր Համայնքին անունով մեր Խորհին
շնորհակալ ութիւնը կը յայտնենք որ Ձեր ջանքերուն շնորհի
մեր Եկեղեցին կօժտուի գեղեցիկ եւ արժեքաւոր սկիհով մը, որուն
փոխարժեքը, 325.00 տոլար հաճեցէք գտնել ներփակեալ:

Նաեւ կը յուսայիք ստանալ Ս. Հաղորդութեան տապանակ մը:
Ստացած էք արդեօք: Նաեւ նուիրատու մը գտած եմ ձաշու
Աւետարանի մը համար, զոր պիտի շինէ Շառւա էնտ թէյլը, նի
Եորքի Զեզի ծանօթ մարդը, որ արդէն հատ մը շինած է նիւ Եորքի
Ս. Խաչին համար: Այս պատճառաւ էր որ կուզէի իմանալ թէ թղթա-
կազմ ձաշու Աւետարան ունի ք թէ ոչ: Նաեւ պիտի խնդրէի որ
մեզի ուղարկէիք նոր Խորհրդատետը մը:

Կը մնայ որ քանի մը ձեռք պատարագիչի զգեստ շինել տամ:
Թագերու Մասին կարծեմ կարգադրութիւն մը պիտի ընէիք, այդ
մասին ալ կուզէի լսել:

Սրբազան Հայր Զեր Հայրական հոգածութեան ապաւինելով եւ
վստահելով է որ այս խնդիրներով կը համարձակիմ Զեզի տաղտուկ
պատճառել: Կը մաղթենք եւ կաղօթենք որ Աստուած Զեզի արեւ-
շատութիւն եւ առողջութիւն պարգևեւ առաջնորդելու մեզ: Մեծ
միհթարութիւն է ինծի համար գիտնալ թէ նիւ Եորքի մէջ հոգածու
Հայր մը ունիմ իբրեւ Առաջնորդ:

Որդիական սիրով եւ ակնածանօք

Արքայի տիկ

St. John's Armenian Church

1335 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 6-9122

DETROIT 6, MICHIGAN

REV. ARNAK KASPARIAN
3289 PASADENA AVENUE
DETROIT 6, MICHIGAN
TOWNSEND 8-7563

Մայիս 3, 1956

Գերաշնորհ

Տ. Մամբրէ Արք. Գալմաեան,
Առաջնորդ Ամերիկայի Հայոց,
Նիւ Եռք, Ֆ. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Կանապարեմ պատասխանել Զեր Սրբազնութեան պամակին որպէսզի ան-
պայման ապահոված ըլլանք Զեր Նախագահութիւնը մեր տօնակատարութեանց :
Եկեղեցւոյս կառուցման եւ օծման 25ամեակի տօնակատարութիւնը պիտի կա-
տարուի նոյեմբեր 25, 1956, Կիրակի օր : Զեր լուսանկարը արդէն իսկ
ապահոված ենք : Կը հաճէի՞ք յառաջիկայ 15 օրերու ընթացքին նաեւ ղրկել
Զեր Օրհնութեան կամ Շնորհաւորութեան գիրը, մէկ էջի վրայ որպէսզի
կարենանք անոնքը ալ քըթը հանել :

Մնամ որդիական սիրով եւ ակնածանօք

աղօթակից

Արքայի կողմէ

Թիվ 809
Տարբե 4, 1956

Արժանաշնորհ
Տ. Առնակ ԲՇՆ. Պատարձան
Նախագահ Արքայի Խորհրդի
Ա. Յովհաննես Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյիթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ձեր նամակին ուրախութեամբ տեղեկացնեք որ Կ'առաջարժե ըն-
թացիկ տարուայ Նայեմբերին ունել Եկեղեցւոյ կառացման և օժան թը-
առնակամեակը:

Հիւընկալ այս Երկրին մէջ, ուր իբրեւ կազմառուալ գրեակ-
հազիւ կէս շարեն միշ մը աւելի պատմութիւն ունինց, Եկեղեցւոյ մը շի-
նութեան քանը հինգամեակի տօնակատարութիւնը ինցնին ցնծութեան գեցեցք
ամիթ մը կընծայէ մեր Հաւատացեալ ժաղավարդինու

Իսկ Ձեր պատուական Համայնքի պարագային* այդ կարգի Հանդի-
սութիւն մը շատ աւելի նշանակելի Հանգամանց մը կը ստանայ, արուած զը-
ցալով որ աւանդապաշտ մերազն ժողովարդի բայորածուէր շանցերուն շնոր-
հիւ պայծառացած Եկեղեցւոյդ սուրբ սեղանին առջեւ Հառակ տած է առաջ,
իմացական և իր կոչումին գիտակից սերունդ մը, որ արդէն կը ստանանէ-
նե զեռ պիտի զայ ստանձնել, փոքր ու մեծ պարտականութիւններ՝ մեր պա-
զայինեւեկեղեցական կեանցէն ներս բերելու իր գնահատելի կարգն ու ըն-
դունակութիւնը ի լուսաւորութիւն մեր Հասարակութեան

Երջանիկ կը Համարինք զմեզ զիտելով որդիքնաշտա պշիտութե-
ները մեր միենակի ծիսական Եկեղեցիներուն, որոնցով կամրողշնայ, կը
զօրանայ և Հատուկնեւէ կը լիսանց Հայրապետական առաջնորդակն մը ք-
թեմը ի վատառութիւն Հայաստանյց Առաքելական Ս. Եկեղեցւոյ

Կ'որչեննեց բոլոր մենց որ տոսեցին, զործեցին ու նու-
րարեցին սիրով ու պատրաստակամութեամբ, որպէսզի Համայնքը այսոք
ունենաց պատճենաթիւնը՝ Հանգիստարձլու ծառենցամեակի Եկեղեցւոյնէ,
որուն սիած Հաւատքի լոյսուր կառչնորդուի մեր առաջին ժողովարդը

Կը Հայրենու ի ծեանէ պարզեանու մեջ, Պատարձան Արքայի
Խորհրդորիդ, յարսից բոլոր մարմիններու և Համայնք ժողովրդան նոր-
զութիւնն ու բարսրութիւնն, որպէսզի բարի զօրծերը արտար ձևացերու ու-
կառւին, ծագին ու պատօնուին յօդուն լնէնուարին:

Մասք սիրոյ ովչունիք
Ազգարար

ԱՐԴՐԻ ԱՐԺԱՆԱՌՈՒ
Առաջնորդ Հայոց ԱՌԵՐԵԼՈՅՔ

St. John's Armenian Church



ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

1335 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 6-9122

DETROIT 38, MICHIGAN

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
50 RHODE ISLAND
HIGHLAND PARK 3, MICHIGAN
TOWNSEND 8-7563

Օգոստոս 18, 1958

Գերաշնորհ

Տ. Մամբրէ Արք. Գալթաեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եղբ, Նիւ Եղբ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Կը ցաւիմ որ քաղաքէն բացակայութեանս ընթացքին հասած են Զեր Սրբազնութեան վերջին երեք նամակները։ Մեր Ծխական Խորհուրդը յարմար դատած էր սպասել իմ վերաղարձին եւ հետեւաբար ակամայ կուշացնէր Զեր նամակներուն պատասխանը։

Ծխական Խորհուրդի մեր վերջին ժողովին մէջ դարձեալ կարդացուեցան Զեր Սրբազնութեան նամակները եւ ուղարկած հաշուեցոյցը։ Կը փութամ Ծխական Խորհուրդին կամքը յայտնել Զեր Սրբազնութեան։

ա. Նախ պարտք կը համարեմ իբրեւ հովիւ եւ Զեր Սրբազնութեան անձնական ներկայացնուցիչը Զեզի յայտնել Ծխական Խորհուրդին տրամադրութիւնը։ Ծխական Խորհուրդը իր վիշտը կը յայտնէ որ քանից ատենապետին եւ նաեւ ատենապետին կողմէ առանձինն գրուած նամակները անպատասխանի մնացած են կամ բարձի թողի եղած են։ Այս առթիւ ես ալ պէտք է խոստովանիմ որ քանից ես ալ գրած եմ հանրային յարաբերութեան շուրջ ուղղութիւն խնդրել ով եւ ուեէ պատասխան ստացած չեմ։ Ծխական Խորհուրդը կը գանգատի որ իրարու ետեւէ հրահանգներ կը դրկէք եւ սակայն մեր կողմէ մատուցուած խնդրանքներուն ու թելադրութեանց բնաւ կարեւ որութիւն չէք տար։ Ծխական Խորհուրդին այս տրամադրութիւնն ու տպաւորութիւնն է պատճառ որ կը դժկամակին անդամ գլուխ 2 տոլարի 2780 տոլարը դրկել։ Մանաւանդ որ անդամներէն ալ չէ գանձուած եւ գանձէն պէտք է որ վճարուի։

բ. Շրջանային ժողովի գաղափարը շատ օգտակար նկատուեցաւ եւ ի պահանջել հարկին մեր ներկայացնուցիչներու ճամբորդութիւնը ապահով է։ Դարձեալ կը ցաւինք որ իմ բացակայութեանս պատճառաւ Զեր թելադրած թուականը չկրցանք օգտագործել։

գ. Գալ ով եկեղեցապատկան կալուածոց կալուածաթուղթերը Առաջնորդարանի անուան փոխանցել ու խնդրին, Մարտ 4, 1954 թուակիր նամակով մը խնդրած էինք որ մեր փոխանցումը յետաձգուէր մեր եկեղեցաշինութեան մէջ ըլլալ ուն պատճառաւ եւ Մայիս 21, 1954 թուականով պաշտօնագիր մը ստացած ենք Առաջնորդարանէն ուր կը սուի թէ Թեմական Խորհուրդը նկատի առնել ով մեր հարցը որոշեց սպասել մեր նոր եկեղեցւոյ եւ այլ շէնքերու շինութեան։

դ. Խրիմեան Հայրիկի գրքոյկներէն գոյացած 100 տոլարը դրկուած է Մայիս 23, 1958ին եւ առ այդ ստացած ենք թիւ 86 ստացագիր մը։ Մնացեալ գրքերը չեն ծախուած եւ Զեր հրահանգին համաձայն մեր քով կը մնան։ Եթէ ծախուին այն ատեն անոնց փոխարժէքը պիտի դրկուի։

ե. Ծխական Խորհուրդը կազմեց Հայ Դպրոցի Խնամակալութիւն մը եւ մանրամասնութիւնները առանձինն պիտի ուղարկուին Զեզի։

Որդիական սիրով եւ ակնածանօք
աղօթականց

Արքական կույ

St. John's Armenian Church



ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

1935 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 6-9122

DETROIT 38, MICHIGAN

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
50 RHODE ISLAND
HIGHLAND PARK 3, MICHIGAN
TOWNSEND 8-7563

Օգոստոս 18, 1958

Գերաշնորհ
Տ. Մամբրէ Արք. Գալմաեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Նորք, Նիւ Նորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Յուլիս 21, 1958 թուակիր Զեր Սրբազնութեան շնորհաբաշխ Գիրը ստացայ,
որով "ի տրիտուր բարւօք ծառայութեան" կը պատուէիք զիս իրաւունք տալ ով
մանիշակագոյն փիլոն գործածելու Ս. Եկեղեցին ներս:

Սրբազան Հայր Զեր առատաձեռնութիւնը կը յուզէ զիս եւ Զեր շնորհաբաշ-
խութիւնը կը նկատեմ ոչ թէ նշան իմ արժանաւորութեան այլ Զեր Հայրութեան
առատաբաշխ անձնաւորութեան: "Երանելի է մանաւանդ տալ քան առնուլ ն"
Գործք Ի-35:

Որդիական սիրով եւ ակնածանօք
աղօթակից

Արքայի կողմէ

Թիւ 3616
Օգոստոս 29, 1958

Արժանաշնորհ
Տ. Անծեկ Քնչյա, Գառավարեան
Խախագահ Մխական Խորհուրդի
Ա. Յովհաննես Մկրտիչ Մկերեցւոյ
Տիրույթ.

Արքի Տէր Անծեկ,

Առաջնու էնք օգոստոս 18 թուակիր Զեր Խամակը և անդի կազմի պարունակութեան Զեր ու յն գրութեան այր Հառուածին մէջ մեր ու շաղրութեան կը յանձնէց պատուարժան Մխական Խորհուրդի այն դիտողութիւնը, թէ առենապետի և էամբ տանադպիրի կողմէ ուսումնական գրուած Խամակներուն չենք պատասխանած Մխական Խորհուրդի յառուկ Բայմաքարին մէջ ընտութիւն կատարելով զատկը որ մեզի ուղարկած բալոր Խամակներուն պատասխանը արւած է և առկա հաստատելու համար ի հորին կրնանք մեզի արամազրել պատճենները:

Այս առիթին օգոստ քաղելով՝ կուզենց Զեզի լիճեցնել արքոյս Մայիս 23 թուակիր մեր պաշտօնագիրը, որով շեշտած էինք թէ Առաջնորդարանին Հայկացուած բայոր Եղբակցութիւնները պէտք է առարգարւած ըլլան նաև Մխական Խորհուրդի անհագութիւն կողմէ որդեսքի Հանգամաներէն նկատի առնուին: Անշատ տակէ սակայն կուզենց բայլ որ Առաջնորդարանին կողմէ պատասխան կը արուի բայոր Խամակներուն առանց բացառութեան Երբեմն, պատճեննեակէն մեր արքակայութեան պատճառու, յապազում տեղի կունենայ, բայց անպայման պատասխան կը արուի ևս Զեր վերայիշել նկառագութեան, եթէ անպատճանի մնացած Խամակները, անոնց թիւը կամ պատճենը հանեցէ մեզի արամազրել:

Իսկ Զեր կոզմէն կամեցներ թէ յաբարերութեանց զիւանի վերաբերեալ գիմումներ բառ, բայց պատճառի չէր տայսու: Այ յաւինք ըստելու որ մինչեւ օրս Զեզմէ այդ տեսակ գրութիւններ չենք տայսու:

Կրտեց թէ Մխական Խորհուրդի իր Խամակներուն պատարանը շատանալուն Հանեանցով կը զժկանիր եկեղեցւոյց անզամներէն իւրաքանչիւրին Հայույն երկու տոլարի բացարի տուքի վարութիւնը ընծա Առաջնորդարանի Հանգամաների կանգելու պարագանեւթեան զանցաւումը որեւէ կերպով որդարանալի Հմբաւունք, եւ զուց, իրբեւ Առաջնորդի Ներկայացուցութիւնը, պարտ էր այս պարագան յանձնել ու շաղրութեանց Մխական Խորհուրդի անզամներունենութեանց Հայույն որ մեր արքանց այն լուսարանութիւնները պիտի զանցնեն Զեզ եւ պատճառն Մխական Խորհուրդը և Առաջնորդարանի Հանգելու Զեր պարագանեւթեանց ընթացք կը արուի ժամանակին:

Զեր շշափած միւս հարցերուն կանգրազանանց յախորդիւ:

Սազթելով Զեզ եւ Մխական Խորհուրդի բոլոր անզամներուն համարէ գործունեաթիւն և եկեղեցաշէն Զեր գործոց յախորդութիւն:

Մխամը Հայրական սիրոյ օրէնութեամբ
Աղօթարար:

ԱԱՍՏՐԻ ԱՐԵՎԱԴԻՍՆՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայ



1335 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 6-9122

DETROIT 38, MICHIGAN

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
 50 RHODE ISLAND
 HIGHLAND PARK 3, MICHIGAN
 TOWNSEND 8-7563

Մարտ 26, 1959

Գերաշնորհ
 Տ. Սիոն Արք. Մանուկեան
 Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 Նիւ Եղբայր, Նիւ Եղբայր

Գերաշնորհ Սրբազն Հայր,

Երէկ գիշեր Ծխական Խորհուրդը միացեալ ժողով մը ունեցաւ Եկեղեցւոյս օժանդակ կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ Զեր քաղաքիս տալիք այցելութեան առթիւ կարգադրութիւններ ընելու: Մեր որոշումները կը Հաղորդեմ Զեր Սրբազնութեան առ ի գիտութիւն եւ ի հարկին Ձեր թելադրութիւնները ստանալու համար:

Քանի որ նախ Քլիվլէնտ պիտի այցելէք, խորհեցանք որ Զեզի դիմաւորութեան երթալու գործը աւելի լաւ կը նանք կազմակերպել եթէ շոգեկառքով հասնիք Տիթրոյթ: Քլիվլէնտէն Տիթրոյթ ամէնՄէ Բիթիրին անուն շոգեկառք մը կայ որ Քլիվլէնտ կը ձգէ առաւօսեան ժամը 8.15ին եւ Տիթրոյթ կը հասնի ժամը 11.55ին: Մեր ենթադրութեան համաձայն զուգը Պուբլիք օրը պիտի յատկացնէք Քլիվլէնտի եւ Շաբաթ առտու կը նաք Մէ Բիթիրին առնել եւ մենք պատրաստ կը լաւանք Զեզ դիմաւորելու Շաբաթ օր Ապրիլ 25ին շոգեկառքի կայարանին մէջ:

Կայարանէն շքախումբով կուգանք Եկեղեցի եւ Հրաշափառով կը նդունուիք: Նոյն գիշերը Վեթերաններու ձեռնարկը կայ: Կիրակի Մ.Պատարագ եւ Հոգեհանգստ Ապրիլ եան Զոհերուն համար: Կիրակի իրիկուն ժամը 7.00ին հրապարակային բանախօսութիւն Զեր կողմէ որուն պիտի յաջորդէ թեթեւ պիտի մը եւ հանդիպում ժողովուրդին:

7 Երկուշաբթի օր ժողով Ծխական Խորհուրդի եւ Պատգամաւորներու հետ: Թերեւս ուզէք այդ վերածել շրջանային ժողովի, ինչո՞ւ կամքն է: Երեքշաբթի իրիկուն դարձեալ բանախօսութիւն մը այս անգամ ուղղուած մեր նոր սերունդին քանի որ պիտի հովանաւորուի նպաց Դասի, Կիրակնօրեայ Նպացի, ԵյՍիՈւայՕնյի, Կրտսեր Տիկնանց Միութեան կողմէ, եւ կազդուրիչ ու հանդիպում դարձեալ: Զորեցաբթի օր Տիկնանց զոյգ Միութիւնները կէսօրուան ճաշ մը պիտի կազմակերպեն: Իսկ Զորեցաբթի գիշեր Եղ. Սրբազնութեանը կուզէ Զեզ հիւրասիրել հրաւիրելով նաեւ համայնքիս մէջ գործօն կարգ մը անձնաւորութիւններ:

8 Ծխական Խորհուրդս կը փափաքի պանդոկի կարգադրութիւն մը ընել, մտածելով որ թէ զուրք աւելի ազատ պիտի ըլլաք եւ թէ հաւանական այցելուներ աւելի ազատ պիտի զգան Զեր հետ ժամադրուիլ երբ զուք պանդոկի մէջ կը մնաք, եւ սակայն այս մասին ալ Զեր Սրբազնութեան կամքը կուզենք իմանալ: Եթէ դասախօսութեանց մասին մասնաւոր նիւթ մը կուզէք որ ծանուցանենք պիտի փափաքէինք որ շուտով մեզի տեղեակ պահէիք: Մեր այս ծրագրին վրայ եթէ ուեւ փոփոխութիւն կը թելադրէք սիրով պատրաստ ենք ընդունիլ եւ ըստ այնմ կազմակերպուիլ: Զեր այցելութեան թուականը չկարենալ փոխելը մեզի նեղ կացութեան մը մէջ դրած եղաւ: Իբրեւ համայնք եւ Եկեղեցի պէտք էր որ ճաշկեցոյթով մը պատուէինք Զեզ բայց Վեթերաններու ճաշկեցոյթը արգելք կը լայա հը մը պահանջման ապահով ալ հւրիշ Մը կազմակերպենք:

St. John's Armenian Church



ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
REV. DIRAN PAPAZIAN, ASSOCIATE PASTOR

1335 OAKMAN BOULEVARD

★ TOWNSEND 6-9122 ★

DETROIT 38, MICHIGAN

11 Նոյեմբեր, 1959.

ԳԵՐ2.

Տ. Սիոն Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հիւս. Ամերիկայի,
Նիւ-Եղրկ, Ն. Ե.

ԳԵՐ2. Սրբազան Հայր,
Ներկայ նամակը կը գրուի ձեզի, Տիբրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ ծուխն փոխադրութեանս հարցին կապակցութեամբ, հարցին ստացած նոր կերպարանքին լոյսին տակ:

Ցարդ ստացած պիտի ըլլայ անշուշտ Ծխական Խորհուրդիս նամակը ձեզի ուղղուած որդեւ կը ներկայացնէ Ծխական Խորհուրդիս տեսակէտը նոյն հարցին գերաբերմամբ:

Ներկայս յարմար դատեցի գրել ձեզի անձնապէս, որպէս զիտեղեակ ըլլայ իննդրին, լաւապէս, իր բուռո երեսներով:

Կսկսիմ այն կէտէն ուրկէ սկսաւ հարցը, այսինքն սկիզբէն, փորձելով միանգամյն զայն սեղմ եւ կարճ պահել:

Կը յիշէ անշուշտ Սրբազան Հայր որ, երբ առաջին անգամ ինծի ըստք զիս այլուր փոխադրելու ձեր փափաթին մասին, ձեւով մը իմ տրամադրութիւններս շօշափելով, ես անվարան իմ պատրաստակամութիւնս ցայտնեցի ձեզի, վասն-զի այնպէս համոզուած եմ որ եկեղեցական մը իր ազգին եւ եկեղեցւոյն ծառայութեան կոչուած է, եւ ծառայութեան այդ կոչը ուրկէ որ գայ անիկա պատրաստ պիտք է ըլլայ հնազանդիլ այդ ձայնին, առանց գերին ըլլալու իր նախասիրութեանց, այսինչ կամ այնինչ ծուխին մէջ մնալու մնայուն կերպով, որքան ատեն որ ենթական չէ ընտրուած իբրեւ Հովիւ, ժողովուրդին կամքովը, տուեալ ծուխի մը, եւ առժամեայ նշանակումովէ որ ստանձնած է պաշտօններ:

Այս այսպէս ըլլայով, միւս կողմէ սակայն, ես որպէս զի կարողանայի այս ծուխն հեռանալ, հարկ էր որ հարցը բերէի մեր ծխական Խորհուրդի նկատառութեան, քանի որ վարչականօրէն անոնց կապուած էի Զեռնադրութեանս օրէն ասդին, երբ ուստ ըրի այս եկեղեցւոյ ծառայել, ժողովուրդին ընդհանուրին վափառովը՝ նոյն այս եկեղեցւոյ վրայ ձեռնադրուելով:

Եթ այնպէս կը կարծէի սակայն որ, մեր Ծխական Խորհուրդը չէզոք գերք մը պիտի բռնէր այս հարցին վերաբերմամբ, եւ ըսէր ինծի, "էհ քանի որ հրահանգ եկած է քեզի որ փոխադրուխ այս ծուխն այլուր, ուրեմն մեզի ուրիշ բան: չի մնար ընելիք բայց եթէ բարի ճանապահ մաղթել քեզի: Շնորհակալ ենք ցարդ տուած ծառայութենէդ, բայց յետ այսու մենք պիտի կրնանք բաւականալ մէկ եկեղեցականով:

Այսէսով, վերջապէս ոսկեղէն առի՞ մը կը ներկայանար իբենց որպէս զի Հովիւներէն մէկէն խալսէին, քանի որ ըստ ինծի տրուած հաւաստիացումին, որպէս թէ իր ենց մտայնութիւնը այն էր ներկայիրն: Քահանայով կը լար ներկայիրն: Եւ ասիկա կը քանչելի այս ինչ որ երկու քահանայով կը լար ներկայիրն: Այս պատեհութիւն մըն էր իրաւամբ, որմէ պիտի ուզէին օգտուիլ նոյն մտայնութիւնը ուստեղող մասնիկ:

Խնդիրը կարծածիս պէս չեղաւ սակայն։ Մեր Ծխական Խորհուրդը երբ լսեց այս տնօրինութեան մասին, չհաւնեցաւ զայն։ Գումարութեցաւ բացառիկ ժողով մը, միմիայն այս նպատակաւ, հոգաբարձական լիակատար կազմով, ճիշդ այն օրը երբ մենք բացակայ էինք ծուխէն, ներկայ ըլլալու համար Ուստորի մէջ կայացող նկեղ եցական եւ Թեմական զոյգ ժողովներուն։ Սոյն նամակով Ծխական Խորհուրդը կը Ճեզի կը յայտնէր իր տեսակէտը եւ բաղձանքը։

Վերոյիշեալ նամակին իբր եւ պատասխան Առաջնորդաբանէն կը պահանջուէր որ Ծխական Խորհուրդի թղթակցութիւնը պէտք է կը էր ամբողջ գիւանին ստորագրութիւնը։ Ասոր վրայ Ծխական Խորհուրդը ունեցաւ Ուրիշ ժողով մը, նկատի առնելու համար ստեղծուած կացութիւնը։ Այս ժողովին նեղկայ էր Ծխական Խորհուրդը իր լրիւ կազմով։ Այս ժողովին ներկայ էի նաև ես ինքս, եւ որմէ կը բացակայէր Տ. Առնակ, ուրիշ յանձնառութիւն մը ունեցած ըլլալով նոյն իրիկունը։

Ծխական Խորհուրդը այս ժողովին մէջ իր խոր վրդովումը արձանագրեց, յանաւանդ անոր համար որ Առաջնորդաբանի հրահանգը այս տնօրինութիւնը ըրած էր առանց Ծխական Խորհուրդին տեսակէտը ունենալու եւ կարծիքը առնելու։ Այս ժողովին մէջ Ծխական Խորհուրդը իբր եւ մէկ մարմին, առանց բացառութեան, վճռակամութիւն ցոյց տուաւ զիս հոս պահելու համար ամեն գնով։

Ծխական Խորհուրդին տեսակէտը սա է.- իրենք կուզեն որ երկուքս ալ մնանք հոս, բայց եթէ պիտի պարտաւորուին, ի պահանջել հարկին մէկ հատով միայն գոհանալ, այդ պարագային իրենց փափաքը այն է որ իրենց մնայ ընտըրութիւնը իրենց չովիւին, եւ չի պարտադրուի իրենց մի որեւէ մէկը։

Իրենց հասկացողութիւնը այն է որ ես իբր եւ ընդհանուրին փափաքով եւ ծայնով ձեռնադրուած չովիւ մը այս եկեղ եցւոյ վրայ, օրինական իրաւունքս է որ մնամ այս տեղը։ Ի հարկին, խօսեցան ի նորոյ չովիւի ընտըրութիւն ընել տալ։

Ամեն պարագայի ինչպէս կը տեսնաք, պատկերը բոլորովին վկայուած է։ Եւ կրնաք բացարձակասէս վստահ ըլլալ որ ես այս փոփոխութեան մէջ ամենաշընչին դերը իսկ չունիմ։ Գիտէք անշուշտ որ ես պատրաստ էի մեկնիլ այստեղ էն։ Սակայն հիմայ որ կը տեսնամ ժողովուրդիս համարումը անձիս հանդէպ, այդ պարագային բնականաբար չեմ կրնար անտես ընել գյաղք զայդ, ի վերջոյ մեր գործը ժողովուրդին հետ է։ Կը ներէք որ ես չեմ կրնար ժողովուրդին զգացումներուն հետ խաղալ։

Այս նամակը կը գրեմ Ճեզի Սըբեազան, գլխաւարաբար մէկ պատճառաւ միայն, այն ալ սա է.- այս հարցին մէջ Ճեզ սկզբնապէս տուած հրահնգը վերջնական դարձնելէ առաջ, պէտք է որ հաշուի առնեք նոր խմորումները։ Զեր վճիռը գիս հոսկէ ուրիշ ծուիս փոխազդելու կրնայ գաղութը երկպառակութեան առաջնորդել։ Հոգաբարձութիւնը իր լրիւ կազմով՝ նման պարագայի մը պիտի հրաժարի, եւ պսիկա անհարկի դժուարութեանց կրնայ մատնել Ճեզ։

Միւս կողմէ Գլիվլէնտի Ծխական Խորհուրդն ալ բաւական մտաճոգուած կը թուի ըլլալ, քանի որ այլ եւս առանց այցելու չովիւի պիտի մնան, եթէ Տիգրոյթի մէջ այս փոփոխութիւնը տեղի ունենայ։ Ասիկա ալ հաշուի առնելիք ինդիր մըն է։



Իրերու այս կերպ դասաւորնեան մէջ, Սրբազան, կը մը ոնեմ չեր կացութիւնը եւ դրութիւնը: Անդին Ուօքիկը նիւթ Սէյնթ Էռւիզի ժողովաւրդներն ալ հարկ է հաշուի առնուին: Բնաւ պիտի չուզէի որ անոնք յուսախաբ ըլլային:

Որպէս զի ծեր հարանգը իր հեղինակութիւնը չի կորսնցնէ եւ ծեր խօսքը տեղը գգայ, ես այս հաւրբաթ օր 13 նոյ. երկու շաբթուայ համար կը մեկնիմ Ուօքիկը ն, ծուխին սկզբնական գործերը կարգի դնելու համար: Երկու յաջորդական կիրակիներ, 15 նոյ. եւ 22 նոյ. անդերձեալ եմ պատարագել Ս. Դէորգ նորաօծ եկեղեցւոյ մէջ: Երկու շաբթը լմննալէ կերջ պիտի վերադառնամ ծիթրոյթ, ծուխս: Այս մասին չոգագարձութեանս համամտութիւնը:

Իսկ Յունուարին ալ կը մտածեմ երկու շաբթուայ համար մեկնիլ հպիթ Սէյնթ Էռւիզի Ս. Ծողակաթ եկեղեցւոյ ծուխնը, դարձեալ Ծխական գործերու կարգադրութեամբ եւ Ս. Պատարագի համար: Արդէն Դեկտեմբերին պիտի ըլլամ Դլիվլէնտ: Կը յուսամ մեր Ծխական իորհուրդին հաւանութիւնը նաև Տիթրոյթի ծուխն յաջորդական այս բացակայութիւններուս համար: Այս պարտականութիւնն ալ կառարելէ վերջ այլ եւս ծեզի կը թողում Ուոքիկը նիւթ հսթ Սէյնթ Էռւիզի ծուխներուն վերջնական կամ առժամեայ կարգադրութիւնը: Այս գործը վեղարաւոր վարդապետի մը գործը կը թուի ըլլալ: Մեզի պէս ընտանի քաւոր քահանաներու համար բակական ծանր գործ մըն է այս երթեկեկը, մանաւանդ երբ այսինքները կազմակերպուած չեն եւ շատ մը բաներու պէտքը ունին, եւ մեր ընելիքը բեռնակրութիւն պիտի ըլլալ ծուխն ծուխ: Ես Ուոքիկը ներթալ յանձն առած եմ տարասայման պարագաներու տակ: Երեցկինս Ռոզալին դեռ նոր տուն եկաւ, հիւանդանոցէն, գործողութեան մը ենթարկուելէն վերջ, եւ անշուշտ այս օրերուն աւելիով պէտք ունի իմ ներկայութեանս իր մօտ, բայց Ուոքիկը ժողովուրդը յուսախաբ չընելու համար ես յանձն առի այս զոհողութիւնը:

Ասլագային համար, վերջնական կարգադրութիւն մը ընելէ առաջ, եթէ կը փափաքիք կրնամ ծեզի առաջարկել հետեւեալը իբրեւ առժամեայ կարգադրութիւն, եթէ անշուշտ, ինչպէս ըսի վերջնական կարգադրութիւն մը կարելի չըլլայ ընել փութով:

Այդ առժամեց ծրագիրը սա է.- Ես եւ Տ. Առնակ հերթով կստանձնենք Ուօքիկը նիւթ Սէյնթ լուիզի եւ Դլիվլէնտի ծուխները հետեւեալ ժամանակացոյցով: Ամիսը անգամ մը շաբթ մը տեւողութեամբ Ուոքիկը ն եւ երկրորդ ամիսն ալ դարձեալ շաբթ մը տեւողութեամբ հսթ սէյնթ լուիզ եւ այսպէս փոխն ի փոխ: Իսկ Դլիվլէնտի կը շարունակենք հոգ տանիլ, ըստ առաջնոյն, այսինքն ամիսը անգամը մը, մի քանի օր տեւողութեամբ:

Եթէ կը փափաքիք գործադրել տալ այս առժամեայ ծրագիրը ցնոր տնօրինութիւն, ես պատրաստ եմ իմ մասնակցութիւնս բերել, եւ կը յուսամ նաեւ որ ծիթրոյթի Ծխական նորհուրդը, յանձն կառնէ նման զոհողութիւն մը, քանի որ իբենց տեսակէտներն մէկն ալ այս էր որ Տիթրոյթի ծուխը զոյգ չովիւներով օժտուած ըլլալուն համար կը հասնէր առաջելական օգնութեան շրջակայքի նուազ բախտաւոր ծուխերուն, եւ հետեւաբար իր ենց համար անհասկնալ կը թուէր չովիւներէն միոյն ետ առնուելու պարագան:

Իսկ գալով իմ անձնական տեսակէտիս եւ զգացումներուս, այս հարցին առնչութեամբ, աւելցնեմ ամիջապէս որ ի տես ներկայ պայմաններուն եւ ժողովրդական նոր խմորումներուն, ես վերջնականապէս հրաժարած եմ ներկային ՀՖ համար ծուխս փոխելու միտքէս: Զեմ կրնար ներկայ կացութեան մէջ հեռանալ այստեղ էն, արհամար հելով ժողովրդին ազնիւ զգացումները: Ասիկա ամենէն առաջ, առանց ուրիշ կէտեր նկատի առնելու, ամենէն խղճիս դէմ գործուած բան մը պիտի ըլլար: Ի վերջոյ չեմ կրնար մոռնալ այն պարագան որ ես ժողովրդին միահամուո փափաքով այս եկեղեցւոյն վրայ ձեռնադրուած եմ եւ ուխտած եմ ծառայել նոյն եկեղեցիին, որքան առեն որ իմ ծառայութիւնս փափաքելի է նոյն եկեղեցւոյ համար, եւ պիտի խնդրէի ուրեմն որ ինծի տրուեր այդ պատեհութիւնը որ իմ լիակատար ծառայութիւնս պատեհութիւնը եկեղեցւոյն:

Ասկէ զատ նաեւ, ներկայիս գործնական գժուարութիւններ կան ընտանեօք փոխադրուելու համար այլուր: Երեցկինս թէ զասաւանդութեանց կը հետեւի Ռւէյն համալսարանին մէջ եւ թէ նաեւ Տիրքորնի ուսուցչական սիստեմին մէջ է: Հստ օրինի ուսուցչական Յ տարին պէտք է ամբողջացնէ ուսուցչական տեւական արտօնագիր ունենալու համար: Ինք միայն երկու տարի ուսուցչութեան ըրած է մինչեւ հիմայ: Եւ որպէս զի միւս կողմէն այս արտօնագիրը կարենայ ստանալ՝ ինքը՝ անհրաժեշտ է որ իր մօրը քովը ըլլայ, որպէս զի իր մայրը խնամք տանի մանկիկին եւ Ողջալին ալ իր ուսուցչութիւնը ընէ հանգիստ ձեւով:

Իսկ ես ներկայիս ատամնաբոյժի խնամքին տակ եմ եւ ակուաներուս ամբողջական դարմանումը կրնայ տակաւին առեն մը առնել:

Ասոնք անշուշտ բոլորը թէեւ գործնական առաւելութիւններ կը ներկացացընեն, բայց եւ այնպէս կընդունիմ որ եկեղեցական ասպարէզին մէջ երկրորդական կը մնան: Ինչպէս վերաբ ըսի, ինծի համար կարեւորը ժողովուրդին զգացումն է, եւ ուրախ եմ որ այս պարագային ժողովուրդին բարի եւ ազնիւ զգացումները հետս են:

Սոյն պատճառներով ուրեմն, Սրբազն Հայր պիտի խնդրէի ձեզմէ որ զիս ազատ Ռողէիք իմ ծուխիս մէջ զիս աղատ կացուցանելով ձեր վերջերս ինծի տուած նոր պաշտօնէն: Ես այնպէս կը տեսնեմ որ Հոս մնալովս աւելի օգտակար կրնամ ըլլալ եկեղեցւոյս եւ ազգիս քան զանազան փոքրաթիւ ծուխեր փոխադրուելով:

Փափաքս է որ, Սրբազն Հայր, ձեր տուած վերջնական վճիռը համապատասխան ըլլալ իրականութեան զոր փորձեցի ներկայացնել վերեւ: Շիտակ է որ ասիկա մէկ կողմէն կը դժուարացնէ ձեր գործը, բայց միւս կողմէն ես ուրախ եմ որ ձեր կարգադրութիւնը զիս նշանակելու համար ուրիշ ծուխի մը Հովիւ, ծառայեց իմ պարագայիս տեսակ մը վորձաքար որով յայտնի եղաւ ժողովուրդին բարեկարա կեցուածքը հանդէպ անձիս եւ գործիս, եւ ասիկա անշուշտ զիս կուրախացնէ:

Սպասելով ձեր իրատես կարգադրութեան, եւ հայցելով ձեր օրհնութիւնը,

Մատչիմ ի համբոյր ձեր Ս. Աջոյն,
Խոնարհ բար,

Տիրապետ.

Տ. Տիրան ՔՀՆ. Փափազ եան

Թիւ 208
Ապրիլ 3, 1959

Արժանաշնորհ
Տ. Առնակ ՔՀՆՅ. Գանգարեան
Հոգեուր Հոգի Ա. Ցով. Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Սարտ 26 Բուակիր Ձեր նամակը ի մասին մեր թե-
մական այցելութեան ի Տիթրոյթ։

Մեզի կը թուի թէ Ձեր Միական Խորհուրդի կարգադրութիւննե-
բը յարմար են, բացի Երկուշարթի իրիկուան խան Ժողովէն, բանի որ
նոյն իրիկուն տեղի պիտի ունենայ Երշանային Ժողով։ Ձեր Եկեղեցւոյ
մէջ, եւ որուն պիտի մասնակցին նաև Ձեր Եկեղեցւոյ քայլոր մարմիններու
զիւանները Այդ Երշանային Ժողովի հրաւերները կը զրկուին Ապրիլ 7ին։

Սենք Գլիկէնտ պիտի այցելենք, Հինգշարթի Ապրիլ 23ին օծրկու
օր պիտի մնանք Հան, եւ Նարաթ օր Տիթրոյթ պիտի զանք Կերեւի թէ ու-
րիշ յարմար շազեկառ չկայ Գլիկէնտէն Տիթրոյթ, ուստի ստիպուած ա-
ռաւատեան ժամը 8.15ի գնացքով պիտի զանք

Հրաշափառի արարողութիւնը որոշ է, "Ուրախ եղէ Աս" Սաղմասը
եւ յարակից աղօթօք պիտի կարդացուի։ Ողջոյնի խոց եւ Պահպանից։

Ճաշին առելի յարմար է բարի գալուստի արդայայտութիւններ
ընել եւ ոչ թէ Եկեղեցիին մէջ։

Կիրակի իրիկուան Հրապարակային բանախօսութիւնը Նահատակաց
նույրուած պիտի ըլլայ՝ թէ ոչ նոկ, Երեքշարթի իրիկուն նոր սերուն-
դին կը խօսինք "Ես Են Ռիմերն" Նրանին շուրջ։

Անշուշտ առելի յարմար է պանդոկի կարգադրութիւն ընել մեզի
համար, բանի որ շատ զբաղած պիտի ըլլանց։

Բարի եղէ մեր հայրական շերժ ողջոյները ու պրհնութիւննե-
րը Հաղորդել պատուարժան Միական Խորհուրդին ու մեր սիրեցեալ եւ Հա-
ւատացեալ ժողովուրդին։

Յիգաւանգ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻԾՆ ԱՐԵՎԵԴԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



St. John's Armenian Church

ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
REV. DIRAN PAPAZIAN, ASSOCIATE PASTOR

1335 OAKMAN BOULEVARD

★ TOWNSEND 5-2500 ★

DETROIT 38, MICHIGAN

29 Սեպտեմբեր, 1960

Գեր, Տ. Միոն Մըք. Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Որ ի Նիւճորկ, Ն.-Ե.

Միրել ի Սրբազան Հայր,
Սոյն նամակով կը փափաքէինք տեղեակ պահել զձեզ մեր Շուխի Կիրակնօր-
եայ վարժարանէն ներս կատարուած կոփոխութեան մը մասին որ ի
զօրու է եւ արդէն իսկ գործադրութեան մէջ է ներկայ դպրոցական տարեշը-
ջանին Համար:

Կիրակնօրեայ վարժարանիս բազմամեայ Տեսուչը Տիրոց. Լեւոն Աւ. Մարկ.
Զէնեան, Հրաժարած ըլլալով իր պաշտօնէն ներկայ դպրոցական շըջանի տա-
րեսկզբին, եւ իր Հրաժարականն ալ Հարկադրուած ըլլալով ընդունիլ, այս
վերջնոյս անդառնալ ի վճռակամութեանը հետեւանքով, եւ առ ի չգոյէ աշխար-
հական ձեռնաս անձնաւորութեան մը որուն կարելի ըլլար վստահիլ այս
խիստ պատասխանատու պաշտօնը, ուստի ստիպուած եղանք ինդը ծուխիս
չովիւներէն Արք. Տ. Տիրան ՔՀՆՅ. Փափազեանէ որ ներկայ տարեշը անին
Համար գոնէ ընդունի ստանձնել Կիրակնօրեայ Դպրոցին Տեսչութեան ղեկը:
Ուրախ ենք որ Տէր Հայրը բարեհաճնցաւ ընդունիլ Կիրակնօրեայ Դպրոցին
Տեսչութիւնը այս տարուան համար, իբրեւ ուղղակի պատասխանատուն սոյն
հաստատութեան, որ ահա կը բարթուի անոր ուսերուն վրայ ի շարս այլ բազ-
մապիսի եւ բազմաթիւ պարտականութեանց, եւ հետեւար այժմ իբրեւ այդ,
Արք. Տ. Տիրան Քահանայ Փափազեան կը ճանչցուի Ս. Յովհաննէս Եկութիչ
Եկեղեցւոյս Կիրակնօրեայ վարժարանին պատասխանատու Տեսուչ Տէր Հայրը:

Այս փոփոխութեան պարագան տեղեկացնութեան նաեւ Թեմիս Կիրակնօրեայ
Դպրոցներու Ընդհանուր Վարիչ-Ցնօրէն Հոգ. Տ. Միւոն Հայր Սուրբին
որպէս զի ըստ պատշաճի հարկ եղած փոփոխութիւնը ընէ իր Թղթածրարին մէջ:

Պիտի ինդը էինք ձեզմէ, Սրբազան Հայր, որ սոյն պարագաները կարեւորու-
թեամբ նկատի ունենալով, այս տարի Տէր Տիրան Քահանայ Հայրը զերծ կացու-
ցանքիք ծուխիս դուրս առաքել ական եւ այլ պարտականութիւններէ, իբրեւ
Այցելու Հովիւ այլ եւայլ շըջաններու, որքան Պր պարագաներն ու պայմանները
կը ներեն անշուշտ, որպէս զի Տէր Հայրն ալ իր կարգին կարենար ամբողջու-
թեամբ նուիրուիլ իր պատասխանատու պաշտօնին ի շինութիւն ազգիս մանկտւոյն
եւ ի փառս Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Որքան որ գիտենց եւ մեզի ծանօթ է, մեր ծուխին կապուած են ներկայիս
հսդ Սէյնթ Լուիզի Ս. Շողակաթ Եկեղեցին եւ Գլիվլ էնտի Հայ Առքլ Կն. Եկե-
ղեցւոյ համայնքը: Կիմանանք որ տնօրինած էք որ Տ. Տիրան Քահանան շա-
րունակէ իր ամսական շաբաթ մը տեւողութեամբ այցելութիւնները ի Սէյնթ
Լուիզ, իբրեւ Այցելու Հովիւ հսդ Սէյնթ Լուիզի Ս. Շողակաթ Եկեղեցւոյն:
Միւս կողմէ ալ կը ցանկաք որ շարունակուի ըստ անցեալի հասկացողութեան
ամսօրեայ Պատարագի կարգադրութիւնը Գլիվլ էնտի Հայ Առքլ Կն, Համայնքին
համար, համաձայն զոյգ Հովիւներուն մէջ եղած հասկացողութեան:

Փափաքելի պիտի ըլլար որ այս տարուան համար գոնէ ասկէ աւելին չի

պահանջուէր մեզմէ, տրուած ըլլալով որ վերեւի պարագաներէն զատ, ուժգին
թափով մը այս տարի լծուած ենք նոր եկեղեցւոյ շինութեան վերաբերեալ աշ-
խատանքներու որ ստիպողական եւ հրամայական կը դարձնէ մեր զոյգ Հովհիւ-
ներուն տեւական ներկայութիւնը ծուխէս ներս:

Յուսալով ձեր լաւագոյն տնօրինութիւնը ներկայ պարագային համար,

Եւ մատչելով ի համբոյր ձեր Սուրբ Աջոյն,

Մնամք Խոնարհ ծառայ,

Ի Դիմաց Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Ծխական Խորհուրդին

Ատենապիր՝

Կոմսուրի Կոմսուրի իշխան
Արամայիս Կարապետեան

Ատենապետ

Եղանակագործութեան
Եղուարդ Սարգիսեան

~~Կոմսուրի իշխան~~ ~~Եղանակագործութեան~~

Թիւ 1609
Հոկտեմբեր 12, 1960

Արժանաշնորհ

Տ. Անակ ՔՆՅ. Գասպարեան
Հոգեւոր Հովի Ա. Յավհաննես Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Սիրելի Տեք Հայր,

Առաջած ենք Սնկո. 29 Բաւեկիր Տեք Խամակը, որով կը հա-
զարդու թէ ձեր կիրակօրեայ պարզի տնօրէն Լեւոն Մրկ. Շէնեան
Հրամանած է իր պաշտօնէն և Տ. Տիրան ՔՆՅ. Փափազեան պիտի վարէ
տնօրէնի պաշտօնը:

Կը գնահատնա Երանեան Մրկ. Զէնեանի երկարամեայ նուիրեալ
ծառյութիւնը, եւ կը շնորհաւորեն Տ. Տիրանի պաշտօնը իրրեւ ձեր
կիրակօրեայ պարզի տնօրէն:

Այս ամթիւ, կը հաստատնա մեր նախկին կարգադրութիւնը,
թէ Տ. Տիրան կը մնայ այցելու Հովի Խոթ Ա. Լուիզի Համայնքին,
ուր պիտի այցելէ ամսուած մէ, մէկ շարաթ, ինչպէս նաև ձեր ծուխին
կապուած է Գլիկլենի մեր Համայնքը, ուր ամբուն անզոմ մը Ա. Պատ-
րագ պիտի մատուցուի ձեր կողմէն Հանեւարար այս տարուան Համար
ուրիշ կարգադրութիւն պիտի լուսայ:

Ցաշողութիւն կը մաղթենք ձեզի, պատուարժան Միական Խար-
բարդիդ եւ եկեղեցաշինաց յանձնախումբին, որպէս զի փաւթագ զլօսի
հանեց ձեր շինարարեան բարի աշխատանքները:

Մշամք Տիրաւնդ սիրոյ ոզնունի
Ազգային պարագաներ

ՄԻՈՒ ԱՐԺԱՆԱՌԱՎՈՐՈՒ
Առջնարդ Հայոց Ամերիկայի

ԲԻՐ ԱՐԵՎԱԿԱՆ Եկեղեց



St. John's Armenian Church of Greater Detroit

REV. DIRAN PAPAZIAN, PASTOR

ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

13 Փետրուար, 1963

Գեր. Տ. Սիսն Սրբ. Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ի Նիւ-Եռոկ, Ն.-Ը.

Սիրելի Սրբազան Հայր,
Զեզի ծանօթ է արդէն որ տարիներէ ի վեր ծխական համայնքիս մէջ եկեղեցինութեան ճիզ մը կայ եւ թէ գործնական քայլեր կառնուին եւ մաս մըն ալ առնուած են արդէն գաղութս օժտելու համար նոր կեղրոնով մը,
բոլորովին նոր վայրի մը մէջ:

Գիտէք արդէն որ եկեղեցաշինութեան առաջին երեսը իրականացած է արդէն
մեր նորակառոյց մշակութային շէնքով ու սրահով որուն բացումը դուք
ինքնին կատարեցիք աւելի քան տարի մը առաջ:

Անկէ ասդին աշխատանքը նոյն թափով կը շարունակուի որպէս զի շինարարական այս աշխատանքները իրենց լրումն ու պասկումը գտնեն գաղութիս համար վայել եւ ճաշակաւոր տաճարով մը: Շինութեան Յանձնախումբը կը խորհի որ ի վիճակի պիտի ըլլայ շինութեան գործին սկսիլ այս գարնան, թէ եւ տակաւին կանխահաս կը նկատուի վերջնական թուականի մը ընտրութիւնը հողը փորելու կամ հիմնարկէքի օրհնութեան համար, որու համար անշուշտ ձեր անձամբ ներկայութիւնը անհրաժեշտ պիտի ըլլայ: Ամեն պարագայի ձեր բարձր նկատաման պիտի յանձնուի այդ ուղղութեամբ տրուած որոշումները կամ որոշուած թուականները, հետզհետէ երբ յայտնի ըլլան:

Զեզի ծանօթ է դարձեալ որ այն օրէն ասդին որ մեր նոր բնակավայրը փոխադրուեցանք ի Սառութթիւտ, մասնաւոր ջանքեր ի գործ դրուեցան որպէս զի մեր հին եկեղեցին իր յարակից Մշակութային շէնքով եւ կալուածներով ծախուին, թէ հին եկեղեցւոյ կալուածներուն վրայ եղած աւելորդ ծախքերէն խուսափելու եւ թէ նոր եկեղեցեոյ շինութիւնը փութացնելու համար:

Վերջերս լսեցինք որ հետաքրքրուողներ եղած են մեր կալուածով, անշուշտ սեւամորթներու պատկանող համայնքներ:

Արդ, առ ի գիտութիւն ձեզի կը ճաղորդէնք որ Արօսթոլ իք Սոսայէթին այսինքն Եկեղեցաշինաց եւ դպրոցաշինաց յանձնախումբը Մխական Խորհուրդին հետ միախորհուրդ եւ համակարծիք են որ հին եկեղեցին իր յարակից կալուածներով ծախուի: Այս ուղղութեամբ առնուած է նաեւ հաւանութիւնը ծխական անդամներու հաւանութիւնը, Մխական բացառիկ ժողովի մը գումարումով, որը տեղի ունեցաւ անցեալ նոյեմբեր 25-ին, աւելի քան 250 անդամներու ներկայութեամբ, որոնք միաձայն հաւանութիւն տուին եւ լիազօրեցին Մխական Խորհուրդը որ իր յարմար դատած եղանակով եւ տուեալ պարագաներու տակ լաւագոյն գինով վաճառէ Հայլէնտ Փարքի մէջ գտնուող Օքմէն Պուլը վարտի վրայ եղող մեր եկեղեցապատկան կալուածները վահանակ:


Արդ սոյն նամակով, պիտի խնդրէինք նաեւ Առաջնորդարանի վաւերացումը

այս վաճառումին համար, որպէս զի ամեն ինչ օրինաւորութեան սահման-ներուն մէջ եղած ըլլար ըստ թեմական կանոնագրութեան տիամադրութեանց:

Զանի որ օրերու հարց կրնայ ըլլալ եկեղեցւոյ վաճառումը, այս առթիւ կը փափքէի նաեւ հարցնել ձեզի թէ ինչ եղանակով արդեօք օծուած եկեղեցի մը կը լքուի: Մասնաւոր արարողութիւն մը կայ արդեօք Սայր Սաշտոցին մէջ: Լսածիս համաձայն Յոյները մասնաւոր արարողութիւն մը ունին եղեր որով Եկեղեցւոյ մը ընծայումը կամ օծումը չեղեալ կը համարուի եւ ապա զայն կը լքեն: Մեր պարագային մենք ինչ կրնանք ընել արդեօք, Մեծապէս շնորհակալ պիտի ըլլայի եթէ այս ուղղութեամբ ինծի գաղափար մը տայիք, եւ մենք ալ մեր կարգին այժմէն այդ ուղղութեամբ պատրաստ գտնուէինք: Որքան որ ինծի ծանօթ է ասիկա պիտի ըլլայ Ամերիկայի մեր թեմին մէջ կառուցուած առաջին հայ Առաքելական եկեղեցին որ պիտի վաճառուի: Ան-շուշան կրնայ ըլլալ ողբատնուած ըլլան ուրիշ պարագաներ ուր առժամեայ տուներ որոնք ատեն մը հնկեղեցին ծառայած ըլլան մեզի, ապա ծախուած ըլ-լան, բայց կարծեմ ասիկա առաջին եկեղեցին պիտի ըլլայ որ քինուած է իբրեւ եկեղեցի եւ ծառայած է իբրեւ եկեղեցի:

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին եւ թելադրութեանց,

Մնամ Խորին Ակնածանօք,
Խոնարհ Աղօթակից,



S. Տիրան ՔՀՆՅ, Փափազեան,
Հովհաննես

Թիւ 6021
Մարտ 14, 1963

Արժանաշնորհ

Տ. Տիրան Քէնյ. Փափազեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յովկաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Ծխական Խորհուրդի
Տիթրոյթ.

Միրելի Տէր Տիրան,

Ատացած ենք Ձեր Փետրուար 13 թուակիր Նամակը, որով ԿԵ
ՄԵՂԵԿԱԳՆԵՐ թէ 1962 Նոյեմբեր 25ին գումարուած համայնքիդ Բա-
ցահիկ Ծխական ժողովը, որուն Ներկայ Եղած են 250 տրատու ան-
դամներ, միաձայնութեամբ որոշած է ծախել Եկեղեցւոյ Հին շենքը
յարակից կալուածներով, եւ կը խնդրէք սռ յն որոշման հաստատումը:

Ձեր խնդրանքը Ներկայ ցուցինք Թեմական Խորհուրդի Մարտ
7ի լիազումար նիստին, որ միաձայնութեամբ որոշեց արտօնել Ձեզի
եւ Պատուարժան Ծխական Խորհուրդին՝ ընթացք տալու Ծխական ժողո-
վին որոշման:

Հաղորդելով զայս Ձեզի եւ Պատուարժան Ծխական Խորհուրդիդ,
կը մաղթենք Աստուծոյ օգնականութիւնը եւ օրհնութիւնները Ձեր
Եկեղեցաշինական գործերուն կատարեալ յաջողութեան համար:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի
Աղօթարար

ԱՌՈՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

1848
310 B
311

Թիւ 1185
Ապրիլ 23, 1964

Արժանաշնորհ

Տ. Տիրան քննյ. Փափազեան
Հոգեւոր Հովկի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենց Ձեր Ապրիլ 13 թուակիր նամակը, որով խնդրանք
Ներկայացուցած էք Ձեր եւ Եկեղեցաշինաց Յանձնախումբի կողմէ, որ-
պէսզի Երուսաղէմի Նուիրակ Հոգեշնորհ Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիկեանին
արտօնութիւն շնորհուի մնալու Տիթրոյթ՝ ղեկավարելու համար Ձեր
Եկեղեցւոյ շինութեան հանգանակաւթիւնը:

Թէեւ Երուսաղէմի Պատրիարքը Նախապէս Հրահանգ ղրկած էր Հայր Կիւ-
րեղին որպէսզի Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի Հանգանակութեան
աւարտումէն վերջ վերադառնար Երուսաղէմիր պաշտօնին գլուխը իբրև
Տեսուշ Սրբոց Քարգամնչաց Վարժարանի, սակայն իմացած ըլլալով որ
Պատրիարքը Հաւանութիւն տուած է Հայր Կիւրեղին մնալու մեր թեմին
մէջ քանի մը ամիս եւս, եւ նկատի առնելով Ձեր համայնքին ընդարձակ
ծաւալը եւ Ձեր Հովկուական քազմազրաղ Վիճակը, այսու կ'արտօնենք որ
Տ. Կիւրեղ Վարդապետ երկու ամիս Տիթրոյթ մնայ՝ ղեկավարելու համար
Ձեր Եկեղեցւոյ շինութեան հանգանակութեան գործը:

Մաղթելով Ձեզի, Շինութեան Յանձնախումբին եւ Հայր Կիւ-
րեղին կատարեալ յաջողութիւն այս աստուածահնոյ գործին մէջ,

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՐՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանապայի



St. John's Armenian Church of Greater Detroit

184
310
311

ՄԲ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAZIAN. PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

★ PHONE 356-1910 ★

SOUTHFIELD, MICHIGAN

Գերշ. Տ. Սիոն Սրբազան Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ազգային Առաջնորդարան,
ի Նիւ-Շորկ, Ն.-Ե.

13 Ապրիլ, 1964

Սրբազան Հայոց,
Կը ներէք որ սոյն աղերսագիրը ձեզի կուղութ ուշացած վիճակի մէջ:
Հարյը կը վերաբերի Երուսաղէմի Ս. Աթոռին նուիրակ Հայր Սուրբերէն՝
Հոգ. Տ. Կիւրեղ Վարդ, Գաբրիկեանի որու Համար կը փափաքինք խնդրանք
մատուցանել եւ ձեր արտօնութիւնը ստանալ որպէս զի Հայր Սուրբը նախ
քան Երուսաղէմի իր մեկնումը՝ մնայ մէկ-երկու ամիս մեր ծխական Համայն-
քին մէջ, նոր կառաւցուելիք եկեղեցւոյ շինութեան հանգանակութեան գոր-
ծով։ Զեզի ծանօթ է որ մեր ծխական Համայնքը չափազանց ընդարձակ է,
եւ ինծի Համար գրեթէ անկարելի՝ շատ մը զուներ բաղկան անձնապէս հաւա-
րելու Համար ժողովուրդին խոստումները իմամ նուէ ըները, տրուած ըլլալով
ահագնութիւնը այն բազմապիսի գործերունցմով հովիւ մը բեռնաւորուած
կըլլայ այս ծուխին մէջ։ Այս պարագան նկատի առնուելով է որ մեր Շի-
նութեան Յանձնախումբը որ "Աբոսթոլիք Սոսայէթի" առնունով ծանօթ է այս-
տեղ, որոշում կայացուցած էր իր վերջին ժողովներէն միոյն մէջ, որ
ուրիշ եկեղեցական մը գտնուէր եւ անոր միակ պատասխանատուոփթեան յանձ-
նըւեր հանգանակութեան գործը։ Եւ այդ միւս եկեղեցականը ժողովականնե-
րուն փափաքով մատնանշուած էր յանձին Հոգ. Տ. Կիւրեղ Վարդ, Գաբրիկ-
եանի։ Նկատի առնելով որ այս վերջնոյս պայմանները կամ պարագաներն
ալ բարեպատեհ էին, խնդիրը օրինականացնելու Համար հարկ տեսնուեցաւ
Երուսաղէմի Պատրիարքին դիմում ընել որպէս զի արտօնութիւն ստացուեցաւ
Հայր Սուրբին Համար։ Այս պարտականութիւնը ստանձնեց Տիար Ալէք Սա-
նուկեան, եւ ապա մեզի իմաց տրուեցաւ որ արդէն իսկ արտօնութիւնը
ստացուած է Երուսաղէմի Պատրիարքէն որպէս զի Հայր Կիւրեղ ատենի մը
Համար օգնէ մեզի եկեղեցւոյս հանգանակութեան գործին մէջ։

Այժմ պիտի խնդրենք ձեր Սրբազնութենէն որ՝ այս խնդրոյն պաշտօնականաց-
ման Համար դուք եւս ձեր վաւերացման կնքը դնէիք այս եղածին վրայ,
որպէս զի Հայր Կիւրեղ անարգել իր նոր գործին նուիրուեր ատենի մը
Համար ծուխիս մէջ, եւ այս ձեւով Առաջնորդական վիճակիդ ծխական Համայնք-
ներէն մին եւս օգտուեր Հայր Սուրբին զոհաբերող եւ փորձառու գործու-
նէութենէն։

Յուսալով որ մեր այս խնդրանքը ձեր բարեացակամ վերաբերմունքին կար-
ժանանայ,

Կը մնանք ձերդ խոնարհ Աղօթակից,

Տիար Ալէք

Տէր Տիար Երէց Փափազեան, Հովիւ

Դիրան



St. John's Armenian Church of Greater Detroit

ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅԹ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAZIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

20 Մայիս, 1964

Գեղշ. Տ. Սիոն Արք. Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Որ ի նիւ ծորկ, Ն.-Ե.

Սիրելի Սրբազն Հայր,
Անցեալ շաբթու Գէորգ Վարդ. Կարպիսեանէն ստացանք նամակ մը, որով կը յայտնէ
իր փափաքն ու պատրաստակամութիւնը գալու եւ ծառայելու մեր թեմին մէջ, Տիթ-
րոյթի մեր Ծխական Համայնքին կապուելով:

Ես իրեն գրած էի որ անշուշտ քեզի պիտի ներկայացնենք քեզմէ ակնկալ ռազմ
պարտականութեանց բնոյթն ու տեսակները, ինչպէս նաեւ պատասխանատութեանց
եւ պարտականութիւններուդ սահմանները, իբրեւ օգնական մեզի, ինք եւս իր
պատասխանին մէջ փափաքելի գտած էր որ գիտնար զանոնք:

Գրած էի իրեն նաեւ որ դիմումագիր մը դրկէ ձեզի իր փափաքը արտայայտելով
որ մեր թեմին մէջ կուզէ ծառայել, կապուելով Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ
եկեղեցւոյն: Իր վերոյիշեալ նամակին մէջ խոստացած էր ընել այդ բանը շուտով:

Հայր Սուբբը ինժի իմացուցած է նաեւ որ իր Ամերիկա մեկնումին արտօնութիւնը
ստացած է արդէն իսկ նազ Սրբազնէն այս վերջնոյս տակաւին Անթիշիասի մենաս-
տանը չի քաշուած, եւ ի հարկին կրնայ այդ արտօնագիրը դրկել ձեզի, որպէս զի
եկեղեցական իրաւասութեանց Համաձայն պաշտօնականութիւնը իր տեղը գտած ըլլայ:

Հայր Սուբբը կը սէ տակաւին ինժի որ իր վիզայի ձեւակերպութեանց Համար ինքը
Պէյրութէն ոչինչ կրնայ ընել եւ կը յուսայ որ ամեն ինչը հոստեղէն կարգա-
գը ըստի:

Արդ, մեր խնդրանքը այն պիտի ըլլար ձեզմէ Սրբազն Հայր որ այս ուղղութեամբ
Հրահանգէիք որ Առաջնորդարանէն պարտն ու պատշաճը տնօրինուէր ամիջապէս որ
յիշեալին դիմումնագիրը ստացուեր: Սենք յոյս ունինք որ յառաջիկայ Սեպտեմ-
բերին Հայր Սուբբը կը յաջողի գալ Ամերիկա եւ իր պաշտօնին ձեռնարկել եթէ
հարկ եղած աջակցութիւնը ընձեռենք իրեն, այլ ապէս ինքը ուսուցչական գործով
պարապելուն, եթէ շուտով չի կարենայ վիզայի իր ձեւակերպութիւնները կատարել,
այդ պարագային տարիով մը պիտի ուշանայ իր գալուստը, վայսն զի դպրոցներու
վերամուտին, արդէն իսկ ինքը գիտնալու է թէ պիտի յաջողի, Ամերիկա գալ թէ ոչ
որպէս զի ժամ առաջ գիտնալով ըստ այնմ շարժի, եւ ուսուցչական իր պայմանա-
գրութիւնը կորսնցնելով մէջտեղ չի մնայ, անկարել իրութեան մը պարագային:

Սպասելով ձեր թելադրութեանց եւ Հրահանգներուն,
Մնամք Ակնածանօք,
Խոնարհ Աղօթակից՝

Տիր Շռամելու բարձրագույն
Տէր Տիրան Երէց Փափազեան,



St. John's Armenian Church of Greater Detroit

ԱՐ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAZIAN. PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

16 Ապրիլ, 1964

Գեր, Տ. Սիոն Սրբ, Արք, Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Առաջնորդարան Հայոց,
և Նիւ-Ենրկ, Ն. - ։

Սիրելի Սրբազան Հայր,
Դարձեալ սոյն խնդրագրով ձեզի կը դիմենք Հովուական օգնականի խիստ հրա-
տապ հարցով։

Գիտակ էք որ բաւական լուրջ դժուարութեան մատնուած ենք հոս՝ մարդու չգո-
յութեան պատճառաւ։ Անոնք որոնք գործի վրայ են ներկայիս, ըլլայ դպրապե-
տութեան եւ ըլլայ նաեւ Հայ եւ Կիրակնօրեայ զոյգ վարժարաններու Տեսչական
պաշտօններով, բոլորն ալ տարի քնին առած եմ եւ պատրաստ Հանգստեան կոչուե-
լու, եւ այդ իսկ պատճառաւ իրենց ազդուութիւնը կորսնցուցած են դժբաղդաբար
ատենէ մը ի վեր։ Սոյն պաշտօններուն համար մարդ գտնալու հարցին եթէ այժ-
մէն հարկ եղած ուշադրութիւնը չընծայենք, պիտի գայ ատեն մը եւ այդ ալ ուշ
չի թուիր ըլլալ, երբ ամիջական ստիպութեան պիտի ենթարկուինք եւ տար-
հապարհակ դժուարութեանց պիտի մատնուինք։ Վերոյիշեալ պաշտօններէն դուրս,
գաղտնի բան չէ որ մենք պետք ունինք ծուխին ընդհանուր կարիքներուն համար
եւս աշխատաւոր պաշտօնեաններու, ինչպէս զոր օրինակ եկեղեցւոյ դիւանատան
գործերը վարող մէկը, երիտասարդաց կազմակերպութեան առաջնորդութիւն տուող
մէկը, վերջապէս անձեր որոնք օրուան Հովուին ընդհանուր օգնականներ ըլլան,
որպէս զի համայնքին գործերը յառաջ երթան անարգել։

Ասոնք ի մտի ունենալով, ծանօթ է ձեզի որ ատենէ մը ի վեր մենք բանակցու-
թեան մէջ էինք արտասահմանէն մէկ-երկու հոգիներ ապահովելու թէ եկեղեցա-
կան եւ թէ աշխարհական, անշուշտ Առաջնորդարանի գիտակցութեամբ եւ համա-
մտութեամբ, երբ խնդիրը հասնէր գործնական համեմատութեանց։

Տակաւին այս բանակցութիւնները կը շարունակուին մասմբ։ Միւս կողմէ սա-
կայն այն անձը որ ի մտի ունէինք դպրապետութեան եւ դիւանական պաշտօններու
համար, երուսաղէմէն Տիար Սահակ Գալայանեան, Հիմակ կը պարզուի որ պիտի
չի կրնայ ընդունիլ մեր հրաւերը, ուրեմն խնդրոյն այս կերպ առած ընթացքը
կը պարտադրէ մեզ որ մենք քայլեր առնենք նաեւ այլ ուղղութեամբ։

Արդ, կը յիշէք որ խօսքը եղաւ նաեւ ի մէջ այլոց Առաջնորդարանի Աստուածա-
բանական սաներէն Տիրացու Ֆակուագ Փափագեանի մասին։ անոր եռամեայ
ուսման շրջանը կաւարտի այս Մայիսին կամ Յունիսին, եւ նկատի ունենալով
որ անիկա իր Դպրապետութեան կարողութեամբ կրնայ մեզի գոհացում տալ,
ինչպէս նաեւ ատոր առընթեր ընդհանուր ծխական գործերու մէջ այլ եւ այլ հա-
ռայութիւններ մատուցանելով մեզի, մեր Ծխական Խերհուրդի անցեալ ժողովին
մէջ հասանք այն եզրակացութեան որ թերեւս այս անձն է որ պիտի կարողանայ
մեզի առժամապէս բաւարարութիւն տալ։ Ուստի յանուն եկեղեցւոյ Ծխական
Խորհուրդիս կը դիմենք ձեզի այսու պաշտօնապէս որ բարի ըլլաք Տիրացու Ֆա-

կոք Սարկ։ Փափագեանը մեր ծուխին համար նկատի ունենալ նախ զինք այ-
լուր վոխադրելու յանձնառութեան տակ մտնելու։

Ակնկալու ձեր նպաստաւոր կարգադրութեանց, մնալով ձերդ խոնարհ Աղօթակից

Տէր Տիրաց Երէց Փափագեան Արքաւութեան



St. John's Armenian Church of Greater Detroit

ԱՐ. ՅՈՎԼ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAZIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

25 Օգոստոս, 1964

Գերշ. Տ. Սիոն Արք. Մանուկեան,
Զարեհնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Ազգային Առաջնորդարան,
Որ ի Նիւ Եօրկ, Ն.-Ե.

Սիրելի եւ Գերաշնորհ Սրբազան Հայր,
Զեզի նամակով մը տեղեկացուցած էինք մեր նոր եկեղեցւոյ Հիմնօրհնէքի
եւ Անկիւնաթարի Զետեղեման Արարողութեան իբրեւ թուական 18 Հոկտեմբերի
Կիրակին նշանակուած ըլլալու իրողութիւնը։ Կսպասէինք որ դուք ալ ձեր
կարգին հաստատէիք այդ թուականը որպէս զի մենք ալ այդ ուղղութեամբ
հարկ եղած պատրաստութիւնները տեսնէինք։

Այժմ պիտի խնդրենք ձեզմէ որ մեզի տեղեկացնէք այս մասին առաջին պատեհութեամբ որ կրնաք։ Նոյնին առնչութեամբ պիտի ուզէինք գիտնալ նաեւ ձեր նախընտրութիւնը թէ ինչպէս ըլլալու է նկարագիրը այդ օրը տրուելիք ձեռնարկին կամ ճաշկերոյթին, իբրեւ աշխարհիկ մասը կրօնական արարողութեանց կամ հանուիսութեանց։ Նաեւ փափաքելի էր գիտնալ կանոնական սույնութեանց մասին եւս։

